«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Պ-176-05.06.2019-ՊԻ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում էլեկտրոնային հաղորդակցության ցանցի միջոցով ծանուցման եղանակի ներմուծումը, ինչը, ըստ նախագծի հեղինակների, կնպաստի քննչական գործողությունների կամ դատական նիստերի մասին դատավարության մասնակիցների տեղեկատվական ապահովմանը՝ այն դարձնելով հանրային զարգացմանը համընթաց, ավելի հասանելի, օպերատիվ և հարմարավետ՝ խուսափելով թղթային եղանակով ծանուցման համար ծախսվող ժամանակի, ռեսուրսների և գումարի վատնումից:

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ դրանով առաջարկվող կարգավորումները prima facie նման են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2019 թվականի ապրիլի 26-ի թիվ 137-Ա հրամանով ձևավորված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը մշակող աշխատանքային խմբի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից համատեղ մշակվող Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագծում տեղ գտած կարգավորումներին, ուստի, առաջարկում ենք հետաձգել նախագծի քննարկումը՝ սույն նախագծով առաջարկվող կարգավորումները Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը մշակող աշխատանքային խմբի հետ քննարկելու և երկու նախագծում էլ առաջարկվող կարգավորումները նույնական ձևակերպումներով ամրագրելու նպատակով: